# ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԳԻՒՏ ՔՀՆՑ. ԱՂԱՆԵԱՆՑ, Դիւան Հայոց պատմութեան։ Գիրք Ա-Բ, 1780-1834։ Թիֆլ., տպ. Շար., 1893։ $4^{0}$ էջք 326 + ԻԲ երկսիւնակ։ Գինն է 2 ռ. ։ —, —, Գիրք Գ. Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, կենսագրութեամբ եւ յաւելուածներով ու ծանօթութիւններով։ Տպ. նոյն, 1894։ $4^{0}$ էջք 892 + ՃՂԶ երկս. ։ Գինն է 7 ռ. ։ —, —, Գիրք Դ. Ղուկաս կաթողիկոս (1780-1800), Ցուցընով, յաւելուածներով, եւ ծանօթութիւններով։ Տպ. նոյն, 1899։ $4^{0}$ էջք 804 + Կ երկս. ։ Գինն է 4 ռ. ։

Մեր առջեւ դրուած են այս երեք ստուար հատորները, ճոխացած Ցովհ. Կարբեցի եւ Ղուկաս կաթողիկոսներու պատկերներով։ Ա-Բ գիրքը կը պատկերացնէ մեզ 1780-1834 ժամանակամիջոցին ազգ.-կրօն. կեանքը, կոնդակներով, նամակներով. եւ այլ վաւերագրերով. նոյնը կըսենք նաեւ Գ եւ Դ գրքերուն համար, որոնք աւելի ընդարձակ կերպով ուսումնասիրուած են եւ նորանոր ձեռագրերով ճոխացած։ Տ. Գիւտ հայրը շնորհաւորելի է իր այս կարեւոր ձեռնարկին համար։ Կը մաղթենք որ չատնան մեր մէջ Տ. Գիւտ Աղանեանցներն եւ Տ. Ցովհ. Մկրեանները։

R. GAUTHIOT, Note sur l'accent secondaire en arménien. (Extr. de la revue «Banasêr», I. iv). Paris, imp. Gainche, 1900. $8^{0}$ pp. 7.

Աւելորդ կը համարենք խօսել մեր ազնիւ աշխատակցին այս շահեկան ուսումնասիրութեան վրայ, քանի որ «Բանասէր»ի ընթերցողներուն ծանօթ է արդէն։

Բժ. Ս. ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ, Որոշ կանոնադրութեան եւ ծրագրի անհրաժեշտութիւնը եւ Հայոց Թեմական Հոգեւոր Դպրանոցների վարչական եւ ուսումնական կարգ ու կանոնի՝ դիսցիպլինայի միակերպութեան գաղափարը։ Մոսկ., տպ. Բարխ., 1900։ $8^{0}$ էջք 85։

Դպրոցական կանոնադրութեանց եւ ուսուցիչներու սաէպ փոփոխմանց դէմ գրուած այս գործը արժանի է ուշադրութեան. «որովհետեւ ամէն մի նորեկը իր հայեացքները եւ իր ուղղութիւնը ունի եւ հետեւաբար թերի թողնելով արդէն եղածը սկսում է մի նորը — իրենը» (էջ 8-9), որմէ յառաջ կուգայ «բաբելոնեան խառնակութիւն» (57)։ Ուրախ ենք յայտնելու որ արեւմտեան Հայք ունին որոշ կանոնագիր մը, շնորհիւ Ռ. Ց. Պէրպէրեանի եւ Դոկտ. Վ. Ց. Թորգոմեանի, որոնք ազգ. դաստիարակութեան ղեկը ձեռք առած կը կառավարեն պէտք եղած կերպով։ Գովելի է այս մասին Հեղինակիս բռնած ուղղութիւնը։

digitised by A.R.A.R.@

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՑՈՒՆԻ, Ս. Պատարագի օրերն, տեսակք եւ ժամեր հայ եկեղեցւոյ մէջ։ Բ տպ., Վեննա., 1899։ Փոքր $8^0$ էջք 93։ Գին 75 հրդ.։

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ պատկերազարդ։ Ե տարի, Զ գիրք։ Թիֆլ., տպ. Մար., 1900։ $8^0$ էջք 392+40։ Գինն է 5 ֆր.։

Ն. ՑԱՐՈՑ, Նկարներ. (Ծաղկաքաղ իմ նամակներից)։ Թիֆլ., տպ. Մար., 1898։ Փոքր $8^0$ էջք 98։ Գինն է 50 կոպ.։

ՆԷՏԱ (Մամիս պատմածը). Թրգմ. Գ. Թիւթիւնճեան։ Վառ., տպ. «Իրաւ.»., 1900։ Փոքր $8^0$ էջք 112։ Գինն է կէս ֆր.։

Տ. ՄԱՆԱՎԵԱՆ, Պառուհանին մուրհակը. Թատերգութիւն եօթը արարուած։ Վառ., տպ. արեւել., 1899։ $8^0$ էջք 120։ Գինն է 1 ֆր., Զարբհանէլեանի մօտ, Վառնա։

ՏԵՂԵԿԱԳԻՐ Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան, 1897-99։ Վիեն., 1899։ Էջք 22։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ Հակալկոլական ընկ. Պարսկաստանի։ Դավրէժ, տպ. Արամ. գպ., 1900։ Էջք 5։

ԿԱՆՈՆԱԳԻՐ եւ Տեղեկագիր Թաւրիզու Լսարանական ընկ.։ Տպ. նոյն, 1900։ Էջք 20։

ԳՐԱՑՈՒՑԱԿ դասական գրքերու Պ. Պալենց գրատան. Կ. Պոլիս, Չաքմաքճըլար, Թիւ 20։ Կ. Պ.; տպ. Մատթ., 1900։ Էջք 23։

CATALOGUE de la Librairie B. Balentz. 20, rue Tchakmakdjilar, Constantinople. 1900, pp 23.

Պալենց Գրատունէն ստացած ենք հետեւեալ գրքերն, որոնց պէտք ունեցողները կրնան դիմել վերի հասցէին.

$1^0$ ԵՆՈՎՔ ԹԷՑԵԱՆ, Նորագոյն ընթացք Աշխարհագրութեան. Տարրական ընթացքի Ա տարին (Մանկապարտէզէ վերջը)։ Գին 3 ղրշ.

$2^0$ Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ, Արձագանք Բարիզի. վարժութիւն ֆրանս. խօսակցութեան։ 383 էջք, գին 10 ղրշ.

$3^0$ Ե. Վ. ԴՈՒՐԵԱՆ, Բառագիտութիւն հայ. քերականութեան. Բ տիպ, 1895։ Էջք 147, գին 3 ղրշ.

$4^0$ Ս. ԳԱԲԱՄԱՃԵԱՆ, Նոր Բառգիրք հայ. լեզուի, որ կը պարունակէ 30,000 բառ։ 672 էջք, գին 15 ղրշ.

$5^0$ Ե. ԹԷՑԵԱՆ, Նախատարերք բնագիտական եւ բնապատմական գիտութեանց. —Միջին ընթացքի Ա տարի, էջք 187, գին 6 ղրշ.

$6^0$ ԵԶՆԻԿ Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, Դպրութիւն կամ Զրուցատրական նոր մեթոտ ուսման ֆրանս. լեզուի. Ա եւ Բ մասերը միացած (էջք 304+416) 16 ղրշ։ Բանալին՝ 4 ղրշ.։

Ստացած ենք նաեւ Եզնկայ գերմ. թարգմանութիւնն եւ Պրոֆ. Կարիէրի նոր ցուցմունքն Եզնկայ մասին, որոնց վրայ պիտի խօսինք գալ անգամ։

Կ. Ց. Բ.

digitised by A.R.A.R.@